Հաստատում եմ՝
ԵՊՀ պրոռեկտոր
Է. ԱՍՐԻՅԱՆ

01.12.2021

ԿԱՐԾԻՔ

Նինել Գագիկի Սարգսյանի «Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը» թեմայով ժ. 01. 02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին: (Ընդունված է ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի 2021 թ. դեկտեմբերի 1-ին տեղի ունեցած նիստում, արձանագրություն թիվ 4)

Ելույթ ունեցան պրոֆ. Վ. Գաբրիելյանը, դոց. դոց. Ա. Ղազարյանը Ս. Գրիգորյանը, Լ. Սեյրանյանը:

Նշվեց, որ Նինել Գագիկի Սարգսյանի «Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը» թեմայով աշխատանքը կատարվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Պաշտպանությունը կայանալու է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում: Խորհուրդը այն կարծիքի է ուղարկել ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոն՝ որպես առաջատար կազմակերպության:

Նշվեց, որ առաջատար կազմակերպությունից պահանջվող կարծիքը պաշտպանությունը կազմակերպող խորհրդի համար պարզապես խորհրդատվական է: Այն ցույց է տալիս, թե որքանով է համընկնում ընդդիմախոսների կարծիքների հետ, և արժանի է արդյոք ատենախոսն իր հայցած գիտական աստիճանին: Ուստի, չկարևորելով մեր որոշ անհամաձայնությունները, ընդհանրական տպավորությամբ պիտի արժևորենք այն, որ ատենախոսը իր թեմայի և նրա մասին եղած գրականության ուսումնասիրությամբ ամբողջացրել է մի հետազոտություն, որը որոշակի տեղեկատվություն է հաղորդում 1960-70-ական թթ. գրական ասպարեզ իջած բանաստեղծներից մեկի՝ շնորհաշատ Արմեն Մարտիրոսյանի և, ինչու չէ, մասամբ նաև նրա սերնդի տեղի և դերի մասին:

Մարտիրոսյանի պոեզիան, անշուշտ նաև նրա «Մազե կամուրջ» վեպը արժանի են համակողմանի գիտական վերլուծության ու գնահատման՝ ամբողջացնելու համար նորագույն շրջանի (այս պարագայում 1970-2000-ական թթ.) նոր սերնդի գրական վաստակը: Ատենախոսը որպես քննության նյութ առանձնացրել է միայն պոեզիան, որի նկատմամբ ունեցած իր սերը անթաքույց է սույն հետազոտության բազմաթիվ էջերում, այնքան, որ շատ դեպքերում բանաստեղծությունների վերլուծության ընթացքում խորքային, ենթատեքստային վերլուծության փոխարեն նա ակամա բանաստեղծի իսկ դարձվածներով վերապատմում է այն:

Բայց կարևոր է, որ շատ դեպքերում նա կատարում է թեմատիկ ու գեղագիտական առանձնացումներ ու ընդհանրացումներ և տեսանելի է դարձնում բանաստեղծի՝ նյութի ընդգրկման սահմանները, պոետական մտածողության, խառնվածքի առանձնահատկությունները: Կարևոր է, որ հեղինակը ամբողջության մեջ նկատելի է դարձնում բանաստեղծ Մարտիրոսյանի դիմագիծը, նրա բանաստեղծական աշխարհը, կյանքի ու ստեղծագործության անցած ճանապարհը՝ առաջին գրքից մինչև վերջինը:

Սարգսյանի աշխատանքը շարադրված է ատենախոսություններին ներկայացվող կառուցվածքային կարգ ու կանոնով, ստանդարտով՝ ներածության մեջ, բաժանված է երեք անհավասար գլուխների:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «Որոնումների առաջին հանգրվանում», առավելապես տեղեկատվական է՝ գրական միջավայրի, սերնդի մասին այլոց բնութագրումների մեջբերումներով, առավելապես «նորարարների», ինչպես նաև Մարտիրոսյանի բանաստեղծական ուսումնառության մասին (ցավոք, առանց օրինակների, հիշելով միայն հեղինակի արձակ ու չափածո վկայությունները): Ատենախոսության առաջին գլխում հեղինակի ներկայությունը քիչ է երևում. այս սերնդին նա ներկայացնում է Ժ.Քալանթարյանի, Ա.Եղիազարյանի, Դ. Գասպարյանի, Զ.Ավետիսյանի և այլ գրականագետների միջոցով: Մի տեղ միայն, սերնդի բանաստեղծներից ընտրելով Ա.Շեկոյանին և Վ.Գրիգորյանին, քննադատում է նրանց (էջ 21-22), մեկ այլ հատվածում Բելինսկու օգնությամբ փորձում է պաշտպանել «իր բանաստեղծին» Վ. Օշականից: Բայց սա թույլ պաշտպանություն է, քանի որ ատենախոսն ասում է միայն, որ «անհաջող բանաստեղծությունների կողքին կան...

թարմ մտածողությամբ, հետաքրքիր պատկերներով մի քանի բանաստեղծություններ» (էջ 28-29):

Ոչ մի հիմք չունենք հավատալու Ա.Մարտիրոսյանին, թե իր անդրանիկ գրքի (1967թ.) շարվածքը ցրվել է, թե «60-ականների գրական մաֆիան» արշավանք է կազմակերպել իր անտիպ բանաստեղծությունների դեմ (էջ 37): Ն.Սարգսյանը գուցե հավատացել է իր բանաստեղծին, և դա է հիմք տվել նրան դասելու 60-ականների գրողների շարքին, բայց 70-ականներին հրատարակած ժողովածուների օշականյան քննադատությանն էլ Սարգսյանը, ըստ էության, պատասխան չունի. այդ բանաստեղծությունները ոչ թե «վտանգավոր էին», այլ «ճապաղ»:

Ատենախոսությունը «փրկում են» երկրորդ և երրորդ գլուխները: Հեղինակը պատշաճ գրականագիտական մակարդակով վերլուծում է Ա. Մարտիրոսյանի պոեզիան, ընդգծում դրա յուրահատկությունները, այն ներկայացնում իբրև կայացած բանաստեղծական համակարգ :

Աշխատանքում հիմնականը և առավել հաջողվածը երկրորդ գլուխն է («Ժամանակը բոլոր չափումներով»), ծավալով ամենամեծը, որ ընդգրկում է հեղինակի բանաստեղծական ամբողջ վաստակի՝ բոլոր ժողովածուների վերլուծությունը, գլխավորապես թեմատիկ առանձնացումներով և բանաստեղծական խոսքի ինքնատիպության, առանձնահատուկ գծերի ընդգծումներով:

Երրորդ գլխում ատենախոսը առանձնացրել է հեղինակի պոետիկայի մի քանի կողմեր՝ հատկապես խոսելով «բառի» դերի մասին բանաստեղծական կառույցում, ցավոք ավելի շատ մեջբերումներով հիշելով այլոց ու հատկապես Մարտիրոսյանի բնութագրումները (արձակ թե չափածո) և ոչ թե «բառի» ցոլացումները բանաստեղծության մեջ օրինակներով, ինչպես ինքն է վերնագրել այս գլուխը՝ «Բառը գույնի, լույսի, հավատքի ու սիրո համապատկերում (Պոետիկայի հարցեր)»: Բայց հենց այս գլխում նա օրինակներով է ցուցադրում Մարտիրոսյանի «բանաստեղծական կառույցի տարբեր ձևեր»՝ ներքին հանգավորում, հատածներ, շարահյուսական միավորներ, պատկերային համակարգ, բնապատկեր, միայն թե քիչ էջեր են հատկացված այս ամենին (16 էջ «բառ»-ին, 5 էջ՝ այս բոլորին):

Ցավոք, աշխատանքում առկա են նաև թերություններ, ոչ այնքան հաջող լուծումներ, որոնց առնչությամբ պետք է անել հետևյալ դիտողությունները.

1. Հաճելի և զոհացուցիչ կլիներ այս աշխատանքը տեսնել ավելի խմբագրված, այնպես, որ չլինեին այն ոչ քիչ էջերը, որտեղ բանաստեղծությունները ոչ թե վերլուծվում են, այլ պարզապես վերապատմվում հեղինակի՝ չակերտով կամ անչակերտ դարձվածներով կամ տողերով (էջ 45, 46, 47, 94 և այլն):
2. Ցանկալի կլիներ, որ շատ բնութագրություններ չլինեին առանց օրինակի, պարզապես հայտարարություն (էջ 31, 33, 34, 36, 40, 47, 65 և այլն), որ չլինեին մեջբերված մտքեր ու տողեր առանց հղումների (էջ 39, 47, 50, 56, 80, 101 և այլն), որ չլինեին գրական կյանքի մասին երբեմն ոչ ճիշտ պատկերացումներ ու բնորոշումներ, օրինակ՝ ասել, թե «Գարուն» ամսագիրը թարմ շունչ էր ժամանակի գրական ու մերձգրական **զաղջ** մթնոլորտում՝ մոռանալով, թե ինչ գրողներ ու բանաստեղծներ են ստեղծագործել և ինչ գրքեր են լույս տեսել այդ տասնամյակում: Կամ խոսել մանկապատանեկան գրականության մասին եղած գրականության մասին և մոռանալ Լյուդվիգ Կարապետյանի անունը (էջ 66): Կամ՝ «անվանի բանաստեղծ» անվանել Գևորգ Աբովին Մայակովսկու և Եսենինի կողքին (էջ 22): Կամ՝ «ժողովածուի շարային կառուցվածքը» համարել «Մարտիրոսյանի բանաստեղծական համակարգի **յուրահատկություններից** մեկը», երբ այն կար և՛ նախորդ, և՛ ժամանակակից շատերի մոտ:
3. Կարելի էր մտածել, արդյո՞ք ճիշտ է Արմեն Մարտիրոսյանի մանկական բանաստեղծությունների քննությունը խցկել երկրորդ (հիմնական) գլխի մեջ, առանց բաժանման կցել առաջին ենթագլխի՞ն, թե՞ տանել այդ գլխի վերջ, առանձնացնել որպես 4-րդ ենթագլուխ:
4. Որոշ տարակուսանք են հարուցում ատենախոսության առաջին տողերն իսկ. պարզվում է, որ Արմեն Մարտիրոսյանը «1960-ականներին գրականություն եկած սերնդի ներկայացուցիչներից է» (էջ 3): Այդ սերնդի ներկայացուցիչների անունները թվարկվում են նաև: Բացի Ա. Ավագյանից, Ռ. Դավոյանից և Հ. Կարճիկյանից, մյուսները (Հ. Էդոյան, Հովհ. Գրիգորյան, Ա. Հարությունյան, Դ. Հովհաննես, Ս. Կոսյան) 60-ականներին ուսանողներ էին և իրենց առաջին գրքույկները հրատարակեցին 1970-ական թվականների կեսերին միայն: Նրանք, ինչպես հեղինակն է նշում, «հետսակյան շրջանի» բանաստեղծներ էին, ոչ թե «Զնհալի տարիների», այլ «լճացումից» «ճահճացման» ընթացքը բռնած

ժամանակաշրջանի բանաստեղծներ, որոնք գուցեն ինչ-որ նոր բան փորձում էին անել այդ միջավայրում, բայց, ցավոք, լուրջ արդյունքի չհասան այդպես էլ: Փորձարարությունը հանդուրժվում էր, երբեմն խրախուսվում նույնիսկ, բայց այդ բանաստեղծներից (որոնցից շատերը չկան այլևս), 21-րդ դարում միայն մի կերպ պոկվեց «երիտասարդ» մակդիրը: Ահա այդպիսի «երիտասարդ» բանաստեղծների մասին այսօր գրվում են ատենախոսություններ: Ինչո՞ւ: Հիմնավորում են «նորույթով և արդիականությամբ» և որ նրանց մասին չեն գրել կամ քիչ են գրել: Իսկ գուցե չեն գրել, որովհետև ասելիք չկա: Իսկ եթե կա, ուրեմն այդ ասելիքը հենց սկզբից պետք է ներկայացվի հիմնադրույթներում (սա ԲՈԿ-ի իմպերատիվ պահանջ է), բայց այդպիսիք չկան, և ընթերցողը եզրակացությունների միջոցով կարող է հասկանալ առաջադրված նպատակը և դրա իրագործման հաջողվածության մասին կարծիք կազմել: Ն. Սարգսյանի ատենախոսությունը նման տասնյակ (եթե ոչ հարյուրավոր) ատենախոսություններից ոչնչով չի տարբերվում: Երիտասարդ գիտնականների պատրաստման հարցով պիտի ավելի մտահոգվեն բուհերի համապատասխան ամբիոններն ու գրականության ինստիտուտը, պատասխանատու լինեն թեմայի ընտրությունից պաշտպանություն ընկած ողջ ընթացքի համար: Դա հաճախ չի արվում կամ թերի է արվում: Իսկ անփորձ գիտնականը «սովորույթի ուժով» իրագործում է տրված «հանձնարարականը»»: Ուրեմն և Ն. Սարգսյանի ատենախոսությունը նույնպես պետք է համարել հաջողությամբ կատարված հանձնարարական:

Ի վերջո, սակայն, նշված դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի կարևոր արժանիքները: Պաշտպանության է ներկայացված գնահատման արժանի բանաստեղծի մասին ցարդ գրված առավել ծավալուն և ամբողջական մի ուսումնասիրություն, որ ընդհանրության մեջ գնահատելի ատենախոսություն է և արժանի է գիտական հանձնարարականի:

ՈՐՈՇԵՑԻՆ - Նինել Գագիկի Սարգսյանի «Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը» ուսումնասիրությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը

ներկայացվող պահանջները, ուստի և այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Հայ նորագույն գրականության

ամբիոնի վարիչ՝ **Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

նիստի քարտուղար՝ **Մ. ՂԱԶԱՐՅԱՆ**

Ամբիոնի վարիչի տեղակալությունը

հաստատում է՝ ԵՊՀ գիտքարտուղար Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ